

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
9	տաբատներ	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	<p>Տաբատ՝ շտաբային, ամենօրյա կանացի Երեսացու կտորը ռիպստոպ տեսակի, մուգ կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից: Աստառը՝ 90գր/մ2 բյազ տեսակի կտորից: Տաբատի արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի, արտադրվում են 42/2 մինչև 62/6 չափս-հասակի (նմուշը և չափս-հասակային սանդղակը տրամադրվում է Պատասխանատու ստորաբաժանման կողմից): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման, թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Տաբատը կանացի կազմվածքի համար նախատեսված ձևվածքով է, կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից, կողային կարերում հավասարաչափ անցկացված է 1.8-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե երիզներ: Աջ հետնամասում կտրված</p>

գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով:
Փողքերի ստորին հատվածը Յսմ ծալված և կարված է գաղտնակարով:
Գուլֆիկը մշակվում է զարդակարված և ամրակարված շղթայով, որը գոտու
մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ հատ 18մմ կոճակով: Գոտին 8
հատ կամրջակներով է, մինչև 45մմ լայնքով գոտեփոկի անցկացման
համար: Պիտակավորումը: Տաբատի ներսից՝ աջ հատվածում, գոտու
ներքևից՝ կարվում է պիտակ՝ արտադրանքի չափս-հասակի (նվազագույնը
30մմ*45մմ չափերով, գրվածքը՝ լավ տեսանելի), արտադրող
կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման
տարեթիվը (գրվածքը՝ լավ տեսանելի) և ինամքի պիտակը՝ լվացքի,
քիմմաքրման, արդուկման թույլատրելի չափանիշների գրառմամբ
(գրվածքը՝ անգեն ընթեռնելի): Դիմացի հատվածում՝ վերևից կոճակի վրա
պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի
տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության
անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ
սովարաթղթե արկղերով, արկղերի մեջ, մինչև 10 լրակազմ, տեսականին
պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի
և պարկերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի
չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ փակ,
պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու
անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության
անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԳԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
9			